## 17. ՍՈՒՍԱՄԲԱՐԽԱՆ ՀԱՅԴՈՆ

Կէլնի կէլնի մեյ խատ խեղճ կնիկ. էսա կնգյան էլ կէլնի մեյ խատ յոթ տարեկան տղեմ:

Էսա լաճու խեր շատ կտրիճ էլեր ի, մեկ օր գյուղաշ թալելու գյախ իսոր թալեր ին գյետին, սպաներ ին:

Էսա լաճու մեր ուր տղին կդնի վարժատուն, ինքն էլ կէրթա դաշտ՝ ցախ կժողվի, իսոր ինոր տուն լվաց կանի, գյեո էրասկնա կապրին:

Մեր կասի ի՞նչխ կէլնի, թող էլնի. մենա թե իմ լաճ էրթա վարժատուն պան սովրի:

Ավուր մեկ էսա երկրի թակավոր կէլնի ուր քաղաք ֆռալու: Էսա քաղքի անուն էլ Սպահան կէլնի: Կուգյա էսա վարժատան առաճ կկայնի, կդառնա ուր նազր-վձզրին կասի. - Մեյ խատ էլ մտնինք էսա վարժատուն, տեսնանք խենքյ ի՞նչ կա:

Թակավորն ի գյեո նազր-վազրի խետ կմտնին ներս, կէրթան դասարայճներ ֆռալու, էն գյձախ կէլնի որ թարսնա զքոսանքի գյախ կէլնի:

Թակավորն ի. որ կմտնի էն մեկ դասարան. կտեսնա, որ էդա դասարանի մեյ պուճախ մեյ խատ տղեմ նստե, ուր գյիրք պռնե ծեռ, ուր դասեր կսովրի:

Թակավոր խետ կտեսնա էսա լաճուն, կիրիշկա իսոր քաժ-քոյ, կիրիշկա իսոր գյիրք ծեռ պռնել կարդալ, կզարմանա, կմոդոխասնա էսա լաճուն, գյեո կտեսնա իսոր վերագյլեոխ բիթիւն պադոտուկ, կասի. «Անպատճառ էսա ֆուկարի տղա յի», կխանի ուր չեռբից քանիմ խատ ոսկի կուտա էսա լաճուն կասի.

- Առ էսա ոսկիք քե, որ դու էդասկնա շատ աշխատասեր տղա ես:

Էսա լաճն ի ոսկիք կդառցուցի եռ, չառնե:

Էսա թակավորն ի կտեսնա. որ էսա լաճ ոսկիք չի ւառնե, կզարմանա. կասի. - Էսա ի՞նչ տեսակ տղա յի, որ յոթ տարեկան ի, խելք ալա պանի չի խասնե, ուր պատիվուն չկերիցուցե էդա ոսկիք առնե:

Թակավորն ի կտեսնա, որ էսա լաճ շատ կաշխատի, կխառցուցի էդա լաճուն, կասի. - Ի՞նչխ էդասկնա շատ կկձրդաս, քո ինգյերներ դհւս կխաղան, դհւ նստեր ես ներս, կկարդաս:

Էսա լաճն ի կասի՝ ես մկա իմ դասեր կսովրեմ, կիրակի ես էլ ֆառւսխ կէլնիմ, ինոնք կինին դարդի մեջ, ես էնգյախ իմ քեոֆ կանեմ: Թող մկա ինոնք ի՞նչ կանղար կուզին խաղան, ես ինոնց աջեն կիրակին կխանեմ: Էսա թակավորն ի, որ կտեսնա էսա լաճու խձպար տալ, խելւացի պատասխանի վերեն, կդձռնա ուր նազր-վձզրին կասի՝ էսա լաճ շատ խելձցի և իմաստուն տղա պիտի էլնի:

Տղեն առեց էդա աղչիկ, նստավ իպե ճեռչ փոսըմ փորեց, դև թաղեց մեջ, խողն էլ իտու վերեն, մնաց:

Քանիմ ամիս ընցավ, ուր կնիկ մեռավ:

Տղեն մնաց մենակ մեջ էտա քյոշկ-սարին:

Տղեյներաց քյոր քյանիմ ամիս աչկեց, տեսավ, որ ախպերներ չէրևացին, ճար կտրավ, էլա̈վ ինգավ ճամբա̈խ:

Շատ կնա̈ց, քիչ կնա̈ց, խատավ էտա քյոշկ սարեն, մտավ ներս, օր ցերեկ էր, մարթ-մարթաստանքյ չկեր, նստավ աչկեց չում իրիկուն, ասաց՝ հա̈լբա̈թ մարթըմ կուգյա̈ էսա տեղ, բա̈լքի իմ ախպերներաց մենեն խաբա̈րմ առնեմ:

Իրիկուն որ էլա̈վ, ախպերն ավ անելուց ետ տա̈ռոցավ, քյոր ախպեր որ մեյմեկու տեսան, ճանչցան, ինգյա̈ն մեյմըկու վզնով, մեյմըկու պաչքիցին, ուրախցան վեր մեյմըկու:

Ախպեր քյոր էտա տեղ ժամանայմ ապրան:

Ախպերն ասաց քյուրոչ. - Քյո՛ր, չէլնեմ, չիմանամ, էսա փոսի վերեն ճյուր լցես: Էն տեղ դևմ եմ թաղե, որ լցես դև կյա̈րի:

Քյոր քյանիմ ամիս ճյուր պա̈ն չիլից վերեն:

Մեկ օր ինքյն ուր ասաց՝ ես պիտի ճյուր լցեմ վեր էսա փոսին, խենքյ ի՞նչ կէլնի:

Իպե քյանիմ օր ճյուր իլից վեր փոսին: Էն մեկ օրն էլ դև սաղցավ, էլա̈վ տյուս, ասաց. - Աղչի՛կ, տյու՝ զի, ես՝ քյոն:

Խետ մեյ մըկու նստան կայնան: Ախչիկ մնաց տղով:

Ինն ամսուց ետ ախչիկ տղեմ իպե, լաճ էր:

Ինչխ անեն խետ էսա տղին, չեն կիտե: Ախչիկ չէր ուզե թա̈լել, ամա չէր կանե խանե էրևուս:

Զա̈թի դևն իսկի չէրևա, կիշըրներ կմտնի ուր մաղարի մեջ, ցերեյներ կէլներ խետ աղչկան ա̈յլամիշ կէլներ: Ախպոր վերեն իսկի այեղ չգեր, նա դեվուց, նա ուր քյուրեռչ տղից:

Քյորն ի կմտածի, կասի դևուն. - Էլի՛ էսա տղեն տար տիր վեր իմ ախպոր ճա̈մխին, էն ավից կտա̈ռնա, էսա տղեն լաճ ի, մա̈յա̈ր կառնի կուգյա̈ տուն, կառնենքյ կպախենքյ:

Դևն առեց տղեն, տարավ իտիր վեր ճա̈մբխին: Իրիկուն ախպերն էկավ տեսավ ճա̈մխի վերեն խեղճ տղեմ անտեր-անտիրական, տըսնըխինգյ օրվան ճիժմ ինգե էնտեղ:

Առեց, իտիր վեր ծիյուն, իպե տուն:

Քյուրոչն ասաց. - Քյո՛ր, քյե տղա եմ պիրե, արի առ, խորոտ լաճմ ի:

- Ի՞նչ կասես, ախպերի՛կ, ի՞նչ տղա:

Ախպերն ասաց. - Ահա տես, վեր ճա̈մխին կընդա̈:

Քյորն ասաց. - Առ տայ էնտեխ, զի խավաս չկա, տղա շախեմ, անփասայվել էլնեմ տղի տե՞ր, չեմ ուզե, տար:

- Տյու ծռա՞ր, տանեմ դեռ՞ր, խռ չէ՞յ կուրիսե խոգիմ, մեղքյ չի՞: Գյետ պախենքյ, շախենքյ, անենքյ մե տղա, աստծու տված՝ մարթ կաբյուկ չանի՞:

Քյոր ծեն կտրեց: Տղին առեց, շոր մոր կարեց, շախեց պախեց, անուն էլ տրին Ալի-Շահի:

Ալի-Շահին ճեռճա̈ցավ շոտըմ, խեյա̈վորվավ, ցերեկներ ուր խեր կտիսներ,

կասեմ. - Էտ դառցի, ետ դառցի, այ ջահել տղա, թե չէ քե զալ կանինք, խեղճ ես:

Հայդոն ի առանց կարևորութեն տալու, գնա կխարցուցի, կասի. - Դուք վո՞վ եք, չեք ասեք:

Էդա ջառդերնին կտեսնան որ չէ, էսա լաճ ուրենցից վազ չի գալ, կդառնան վերեն, ինոնց ճոչ, անուն էլ Սուսամբառ կէլնի, կքաշի ուր թուր, մեյ խատ կուտա էսա լաճու գլխու մեչ, խետ որ կուտա, էսա լաճու գլոխ կէլնի էրկու դասլակ, կկախվի մոտեն ճեյան-ճեյան: Կդառնան կէրթան, քիչմ տեղ կէրթան, էսա Սուսամբառն ի կխղճա վեր էսա լաճուն, ուր մեկ նաֆարին կեռռեռխկի, կասե. - Կնա ինոր գլեոխ կտարի, ա՛ռ արե մեր մոտ, մենքյ էսա տեղ քյե կպչկենքյ:

Էսա քառսուն ձիյավորներն ի կիճնեն էդա տեղ քիչմ խանգյստանալու:

Էսա նաֆարն ի ձին կքշի կուգյա Հայդոյի մոտ, յարեք գլեոխ կկապի խորոտ կդառնա կխեծուցի վեր ուր ձիյուն, կառնի կուգյա իսոնց մոտ:

Որ կպերին մոտ Սուսամբառ, Սուսամբառն ի կասի. - Տյու որտե՞ղից ես, ինչի՞ էլեր ես ինգյեր ես մենակ էսա դար քար:

Հայդոն ի կասի. - Մեր երկիրն էր, ասի մեյ խատ էլնեմ փռամ, ի՞նչ կէլնի:

Սուսամբառն ի կասի. - Գյեռ, ես խղճացի քո վերեն, քո գլեոխ կապեցի, որ էրթաս քո թակավորին պյարեով անես, ասես գյեռ զիկ ընկնա արին քառասուն ձիյավոր:

Հայդոն ի էլմէլ թարկ չի տա, կխարցուցի, կասի. - Աղեկ որ ես էրթամ տուն, թակավոր զիկ խարցուց՝ էդա վով ի քե էդասկնա արե, ես ի՞նչ ասեմ:

Սուսամբառն ի կասի. - Որ թակավոր քյե կխարցուցի կասի, վո՞վ ի արե, ասա չեմ կիտե, քառսուն խատ ձիյավորն ի, Քիշմիշ քարեն ին էկե, կնցնին, ես խարցուցի ասի՝ տյկիք վո՞վ եք, ո՞րտեղից կուգյաք, ո՞րտեղ կէրթաքյ, էսա մեր թակավորի խողի մեջ ի՞նչ պյան ունեք: Էսա խարցուցելու վերեն, զարկին մեչ իմ գլխուն, արին էրկու կտոր, սորա դիժարներ էկան, պռնեցին իմ գլեոխ կապեցին, զիկ էռռեռխկեցին քյե մոտ, որ խաբյար տամ:

Հայդոն ի կասի. - Աղե՛կ, որ խարցուց թակավոր ասաց՝ իդնյա ճոչ վով ի, ինչի՞ խամար ինգյեր ին սարեր, քարեր չառտութեն կանին, էն գյախ ի՞նչ ասեմ:

Սուսամբառն ի կասի. - Որ էդասկնայի, կայնի ասեմ, - կասի, - Քո անուն ի՞նչ ի:

Հայդոն ի կասի. - Իմ անուն Հայդոյ ի:

Սուսամբառն ի կասի. - Հայդո, իմ անուն Սուսամբառ ի, քո թակավոր որ կխարցուցի, ասա ինոր անուն Սուսամբառ ի: Ես որ կամ՝ ախչիկ եմ, իսոնք որ կան, զմեն իմ նաֆարներն ին, ես իսոնց ճոչն իմ, մենք զմենս էլ Քիշմիշ քաղքից ինք: Ավադա որ քո թակավոր ասի՝ էսա ի՞նչ պյան ի, ախչիյմ ի՞նչ կէլնի որ քառսուն նաֆար կկընցնի, ինքն էլ կէլնի ինոնց ճոչ կինի սար քար, ջառդութեն կանի: Ես, - կասի Սուսամբառ, - որ էլեր իմ ջառդ, ինգյեր իմ էսա սարեր, թող քո թակավոր չասի, թե ես աղքտի տղա իմ կամ ախչիկ, ինգյեր իմ սար քար, որ իսոր ինոր թալնիմ, սպանիմ, տանիմ ապրիմ: Չէ՛, - կասի, - ես էլ մեր Քիշմիշ քաղքի նազրվազրի ախչիյն իմ, ես որ էլեր իմ ինգյեր իմ էսա սար քար, ինոր խամար, որ իմ խեր զիկ ուզեց տալ մեր թակավորի լաճուն, ես էլ չուզեցի, չուզեցի ինոր խամար, որ ասես տղեն խորոտ չէր, չէ՛ խորոտ էր, ճաման մեյ կտոր չաչալ էր, իդոր խամար ասի չեմ առնե: Իդոր վերեն խերս վեր զիկ պարկացավ, ասաց, որ դյնի քո գլխու, տյու է՛լ իմ ախչիկ չես, յա՛ էն թակավորի տղին կառնես, յա՛ չէ՝ քե իմ տնից կխանիմ տյուս, որտեղ կուզես, էնտեղ կնա: Մկա իդոր վերեն ես չուզեցի առնել էդա

թակավորի չաչալ տղին. ասի՝ ես իմ ուզած կառնեմ, թող աղքատ էլնի. խտոր վերեն թողի էլա ինգյա̈ տյուս, էսա սար քար: Սուսամբա̈րն ի կասի, - Մկա ինգյեր իմ էսա սար քար ես ո՛չ նա թալան կանիմ, ո՛չ մարթու քթին կդիպնեմ, մենակ վով որ մե խոռ իրիշկա. ինոր ճարդփշուր կանինք: Գյետ էսայի իմ զմեն պա̈. Հայդո: Գյետ կնա՛ քյո թակավորին ասա:

Հայդոն ի էսա զմեն պա̈ն կլսի, կտեսնա, որ էսա ախչիկ Սուսամբա̈րն էլ ի՞նչ կանդար որ մարթու շոր ի խագյե, ճաման շատ խորոտ ի, աչք կինի Սուսամբա̈րին. կդառնա էդա Սուսամբա̈րին կասի. - Սուսամբա̈՛ր. ես որ գյա̈մ սորա քյո երկիր քյե կնտնեմ, տյու զիկ կառնե՞ս: Ես էլ. - Հայդոն կասի. - մեր թակավորի սըռ գյաթիպն իմ:

Սուսամբա̈րն ի կիրիշկի էսա լաճուն. կտեսնա. որ խորոտ սիրուն տղա ի. կասի. - Ինչի չէ, տյու արե զիկ կնտի. ես քյե մա̈յա̈ն խոսկ կուտամ:

Սուսամբա̈րն ի կէլնի կաց պա̈րև կանի էս·ա լա̈ճուն. ուր քառսուն նաֆարներաց խետ կինի ուր ճամպախ, կէրթա:

Հայդոն ի ինքն էլ կէլնի ուր սիվտակ ծին կխեծնի, ուշիկ-ուշիկ կուգյա̈ տուն, էլ չէրթա թակավորի մոտ. կասի չյուր գյլեոխս սաղանա, նոր կէրթամ. մկա որ էրթամ, չէլնի:

Էսա թակավորն ի կտեսնա, որ Հայդոն էրկու սահաթ առաշ ասաց՝ կէրթամ կփոամ կուգյամ, մկա էլավ էսա ութ-տասս սահաթ կէլնի, մարթ կեորեոխկի տուն, կասի՝ կնացեքյ, տեսեքյ, խենքյ էսա լաճ ի՞նչխ էլավ:

Թակավորի խալայքղներն ի կուգյա̈ն Հայդոյին ուրենց տուն կգտնին, կուզյան կտեսնան, որ ի՞նչ, էսա լաճու գյլեոխ բիթKին ճարդուկ ի, շոտմ խապար կտանին թակավորին, կասին. - Թակավոր ապրած կենաս, Հայդոյի գյլեոխ գյետ կոտոտուկ. իկե, պառկե տուն:

Թակավոր խետ որ կլսի էսա խա̈պա̈ր, կէլնի ինքյ, ոտ ոտնով կէրթա Հայդոյի մոտ, կէրթա̈ կտեսնա, որ ա̈ղորթմա̈նց գյետ Հայդոն գյլեոխ կապուկ. պառկե յաթաղը:

Թակավորն ի կուգյա̈ կմտնի ներս, որ կտեսնա էսա լաճուն, կասի. - Հայդո, չէ որ ես քե ասի, թե էրկու սահաթից ավել չմնաս դուա, տյու զիկ ինչի՞ չլսա̈ր, էսօր էսա ողեյեն էկավ քո գյլեոխ:

Հայդոն ի կասի. - Պա̈ն չկա. թակավոր ապրած կենաս, ի՞նչ կա̈նդա̈ր որ գյլեոխս կոտրեցին, ճաման էդա գյլեոխ կոտրելուց ես շատ պան խասկցա:

Թակավորն ի կասի. - Ախր, Հայդո՛, ինչի՞ է անգյնցար, ասա տեսնամ խենքյ ի՞նչ էլավ, ինչի՞ գյլեոխդ կոտրեցին:

Հայդոն ի կբաշլայի պատմել, կասի. - Թակավոր ապրած կենաս, ճիշտ ի ես քեզնից էրկու սահաթ իզին առի, ասի կէրթամ կուգյա̈մ, ճաման ես ինչ մեղավոր եմ. որ բա̈լեն էկավ փա̈թութվավ իմ գյլեոխ, - Հայդոն ի կասի, - թակավոր ապրած կենաս, ես որ քո քեոշկ սարից էլա տյուս, քաղաք փոսլեն սորա, ասի՝ էրթամ էնա մեկէլ քաղաք. տեսնամ խենքյ էնտեղ ի՞նչ ճա̈լի մեչ ին մեր ջաղսմաթ, որ ինգյա ճա̈մպա̈խ կնացի, կնացի խասա Ալատաղ սարի տակ, ասի՝ նստեմ էսա տեղ քիչմ խանգյստանամ, սորա կէլնիմ կէրթամ. տեռ չի նստել՝ տեսա էն թա̈րա̈ֆից դռմանի մեջ պա̈ն կերևա, քիչմ աչկեցի, որ իսոնքյ մոտոխասցան, տեսա որ իսոնքյ քառսուն խատ ծիյավոր ին, գյոտ կքշին կուգյան: Ես էլ զիզիկ ասի՝ տեսնամ խենքյ իսոնքյ վո՞վ ին էսասկնա ալ աջալա կէրթա̈ն, ասի ես կկայնիմ էսա տեղ վեր էսա ճա̈մխին. թե որ էսա էկողներ մերոնք էլնին՝ պիտի պա̈րյով

տան զիկ, ընցնին. թե որ չէ մունչ ընցան՝ իսոնքյ ջառդեր կէլնին: Իտասկընա էլ արի, կայնա վեր ճմմխին. չուր էսա քառսուն ձիավորներ էկան. էկան առանց զիկ կարևորութեն տալու խառ քշեցին ընցան, կնացին. առանց պարև էլ տալու:

Ես էլ տեսա, որ իսոնքյ մերոնցից չեն. ասի իսոնքյ անպատճառ ջառդ կէլնեն, ես պիտի էլնեմ ինեմ իսոնց ետև, պիտի խարուցիմ տեսնամ խենքյ իսոնց ի՞նչ պան ունին մեր խողի մեջ: Էլաւ ալ աջալա ես էլ իմ սիվտակ ծին խեծա, ինգյա իսոնց ետև, խասա, ասի՝ տյուք վո՞վ եք, որ եկեր եք մեր խողի մեջ: Էսա ջառդեր զիկ էլմ էլ իսկի կարևորութեն չտվին, ընցան կնմցին, սորա մեկ դառցավ ասաց՝ Պմլա՛մ, ջահել ես, ափսոս ես. քո ի՞նչ պմն ի, մենք վո՞վ ինք, դեռ՞ր կէրթանք. կնա քո պմնին, խեղճ ես, թե չէ՝ քյե զայ կանենք: Ես էլմ էլ ականջ չկախեցի, ինգյա հա՛ իսոնց ետև, հա՛ խարցուցի, իսոնցից վազ չէկա: Էսա ջառդերաց ճոչ, որ տեսավ՝ չէ, ես դմյմմհմլով վազ չեմ ինգյմ, դառցավ ետ քաշեց ուր թուր, իտուր մեչ գյլխուս. զիկ իսկեց գյեդին, գյլեոխս արաց էրկու տապակ, սորա դառցավ կնաց, ես ինգյա էնտեղ մնացի: Քիչմ սորա էդա մարթ տեսա մեյ խատ նաֆար դառցուց տեխ զիկ, ես ասի՝ գյեռ էկավ զիկ պիտի բիսբիթխն պոծցուցի: Համան, ալլահ վար, էդա մարթն էկավ, իմ գյլեոխ խորոտմ կապեց, զիկ նստցուց ծիյու վերեն, զիկ արեց տարավ մոտ ուր ճոչ: Գնացի մոտ ուրենց ճոչ, տեսա. որ նստեր ին. ինչ որ կեր ուրենց խաց պմրուց կերանքյ. սորա իտոնց խարցուց ասաց՝ տյու վո՞վ էս: Ես էլ ասեցի՝ հասարակ մարթ իմ, իկեր իմ էսա դարբար փռալ:

Էդա ջառդըպաշին էր ասաց՝ քե խնայեցի, տիժարս էկավ վերեդ. էսա մարթ էորեոխկեցի ասի՝ կնա՛, ինոր գյլեոխ կապի, խեղճ ի, շահեղ տղա ի, ասաց դառցավ. ասաց՝ դե՛ կնա քո թակավորին պմրեով արա, ասա գյեռ քառսուն խատ մարթ Քիշմիշ քաղաքեն ին, էկան ընցան ես էսա պմն խառցուցի ուրենց, իմ գյլեոխ էսա խանեցին: Ես էլ, թակավոր ապրած կենաս, ասի՝ աղեկ. էրթամ թակավորին ասեմ էտասկնա, համան տյուք էլ ասեք, տեսնամ խենքյ տյուք վո՞վ եքյ, ծեր անուն ի՞նչ ի, որ ես էլ էրթամ թակավորիս ասեմ: Էդա շառդերաց ճոչն էր ասեց՝ կնա քո թակավորին ասա, ես որ կամ՝ Սուսամբմրն իմ, ես ախչիկ իմ. ես Քիշմիշ քաղքի նազրվազրի ախչիյն եմ: Ես որ ինգյեր իմ էսա սարեր քարեր թե չէ ջառդութեն անելու մտքով եմ ինգյե, որ տանեմ տուն պախեմ. չէ՛. ես էսա պմն որ արեր իմ, իմ խոր ինատուն իմ արե. զիկ զոռով կասեր պիտի գյաս մեր թակավորի լաճուն առնես. ես էլ տեսա, որ էդա լաճ չաչալ ի, չուզեցի, ասի՝ աղա՛, ես կուզեմ մեյ կտոր շենքով-շնորքով տղա, թող աղքատ էլնի, զմրար չկա, ես ինոր կառնեմ, համան իմ խեր զիկ ականջ չարաց, զիկ ասաց՝ յա՛ թակավորի տղին կառնես, յա՛ չէ՝ իմ տուն էլ չես մտնե: Իտոր վերեն էն օրվնից ես իմ խոր տնից իկեր իմ տյուս, էսա քառսուն մարթերն էլ խետ զիկ, որտեղ որ էրթամ, որտեղ որ իմ սրտի ուզած տղա տեսնամ, ինոր պիտի առնեմ: Իսոր վերեն ես էլ ասի՝ թե որ էսասկնա ի, Սուսամբմր, ես քյե խավնա, ես կուզեմ քյե առնիմ. թե որ գյամ քյե կտանիմ զիկ կառնե՞ս: Սուսամբմր ի խոսկ իտոր, ասաց՝ ախր որ տյու զիկ կնտար, ես էլ քյե խոսկ կուտամ, կառնեմ: Ես էլ տեսա, որ մղորթմանց խորոտ ախչիկ էր, խոսք տվի, մատնկներս փոխեցինք, ինոնք ինգյմն ուրենց ճմնպմխ գնմցին, ես էլ՝ թողի էկա տուն, ասի քիչ գյլեոխ աղիյնա, նոր կէրթամ թակավորի մոտ: Գյեռ ընկնա, թակավոր ապրած կենաս, իմ գյլեոխ գյեռ ընկնա փորձանք էկավ:

Թակավոր ամր արաց. ասաց. - Հայդոյին տարեք սարեն, էնտեղ խորոտ տեղավորեք չյոփ ծրի:

Հայդոյին առրն կնացին սարեն. չյուր մեկ ամես: Մեկ ամսուց սորա ժրանվ էլավ վեր:

Սուսամբարի խեր որ կտեսնա ուր ախչիկ էսա էլավ քանի ամես կուրեր ի. կասի՝ էլնեմ բարե մեյ ճար անեմ. կասի. էսա ախչիկ անպատճառ մեկ լաճու վերեն սիրահարվեր ի, որ մեյ մհուքհում ինոր սերտ չի կտրե. ինք ուր կասի՝ կանչիմ մեյ խատ դավրեշ. ասեմ թող ինի դանրբար. տեսնամ խենքյ իմ ախչիկ տեսոր ի: Հում դայ էլ էրթա էն լաճ. որ Սուսամբար կուզի. կընդնի. յա՛ սպանել տա. յա՛ չէ՝ պոնի սաղ-սաղ պիրի մո զիկ:

Էսա Սադրազամն ի կէլնի էն մեկէլ օր կկանչի մեյ խատ դանվրեշմ կպերի ուր մոտ. կասի. - Դանվրեշ բաբա. իմ ասած պան. որ արեր ես. քյե ի՞նչ որ պերանող կպոնի կուտամ:

Դանվրեշն ի կասի. - Ասա աֆանդի. թակավորի լաճու ինան քյո ջան սաղ մնա, ինչի՞ չէ. որ ծեռնես գյա՝ վեր իմ գյլխուն. ի՞նչ պիտի էլնի. էդ էլ պան՞ն ի:

Սադրազամն ի կասի. - Ես ունեմ մեյ խատ Սուսամբանր անունով ախչիյմ. էդա ախչիկ թակավոր ասաց՝ տուր իմ լաճուն: Էն թակավորի լաճուց կայրի էլ վեր պիտի տամ իմ ախչիկ. համան ի՞նչ կա՝ մեյ կտոր թակավորի լաճու գյլխու վերեն չյուչալ կա. իտոր վերեն ի՞նչխ որ արի ճար չէլավ. ասաց՝ ես էն չաչալ տղին չեմ առնե. ասաց՝ ես իմ ուզած կառնեմ. թող ֆուկարա էլնի: Մկա իտոր վերեն թակավորն էլ շատ պարկացավ իր վերեն, ասաց՝ էդա ի՞նչ տեսակ ախչիկ պախել ի. որ խեր չի կանա վեր ուր ախչկան: Իտոր վերեն ես էլ վերուցի ախչկան ասի՝ յա՛ թակավորի լաճ կառնես, յա՛ չէ՝ իմ տուն չես մտնե էլ: Իտոր վերեն. էն օրվնե չուր մկա էսա ախչիկ կնացե. չիկե. անպաճառ կնանցե ուր ուզած մեյմ կնտե առե նստե: Իդոր խամար ես քյե կանչեցի, որ էրթաս որտեղ որ ի յա իմ ախչիկ Սուսամբանր կնդնես պիրես. յա՛ չէ՝ էդա լաճ վով ի՝ յա սպանել տաս. յա՛ սաղ-սաղ պոնես պերես մո զիկ:

Դանվրեշն ի կասի. - Էդ էլ պան՞ն ի. Սադրուզամ աֆանդի. էդա իմ ծախ ծեռուց պանն ի, կասի. ամա, կասի. ամր արա թող մեյ խատ ծիմ տան զիկ:

Սադրազամն ի ամր կանի մեյ խատ ծիմ կուտան էսա դանվրեշուն:

Դանվրեշն ի կխեծնի կընո ծին. կինի ճանապանխ կէրթան:

Գյանքյ Հայդոյին: Հայդոն մեկ ամիս յարալու կմնա: Մեկ ամսից սորա կժրի, էն մեկ օր կէլնի կէրթան մոտ թակավոր. կասի. - Թակավոր ապրած կենաս. ես մկա ժրա. ես կանվր եմ արև, որ ի՞նչխ էլե պիտի էրթամ, ի՞նչ գյնով որ էլնի Սուսամբանր կնդնեմ:

Թակավորն ի ի՞նչ կանտանր. որ էսա լաճուն կհամոզի. կասի. - Արե դու էդա սավդից վազ կաց. ես քյե խամար իմ սադրազամի ախչիկ կպերեմ. ինչ պան ունես կէրթաս կինես չեոյեր. սար քար մեկ ախչկա խամար:

Հայդոն ի ճար չէլնե. չի համոզվե. կասի. - ՉԷ՛, իլանհ, բիլանհ ես քանի որ խոսկ եմ տվե. պիտի որտեղ որ էլնի էրթամ, կնդնեմ պիրեմ:

Թակավորն ի կտեսնա, որ ճար չկա, կասի. - Հայդո՛, քու մուր քու ճակատ. տյու գիտես, ի՞նչխ կուզես ըսկնա արա, ես քյե կասիմ վազ կաց, կնացիր մեյ խատ գյլեոխդ-մլեոխդ բիթուն կոտրեցին. քիչ էր մնացե ջանդ էլ դներ վերեն:

Հայդոն ի կնաց պանրև կանի. կէրթա ուր սիվդակ ծին տյուս քաշել կուտա, կխեծնի կինի ճանմպանխ կէրթան, ուր խետն էլ կառնե շատ սըր տաշ նաֆար Ուսեի:

Հայդոն ինան ուր նաֆար կինին ճանմպանխ կէրթան. շատ կէրթան. քիչ կէրթան.

կէրթան կխասնին մեյ խատ ախպրիմ վերեն. ծիյայնտերաց կէճնին տակ. որ էդա տեղ քիչմ խանգյստանան. որ էլնին ինին ճամպախ:

Կնստին, չեն նստի կտեսնան էն թարաֆից մեյ խատ ծիյավորմ կուգյա. կուգյա կխասնի իսոնց. պարև կուտա. էս էլ կըճնի տակ ծիյուց. որ խանգյրստանա:

Էսա ծիյավորն էլ էն դնվրեշն ի, որ Սուսամբնարի խեր պոնե էորեոխկե Սուսամբնարին յա՛ ինոր նշանածին կնտնեղու:

Էսա դնվրեշն ի խետ կլսի Հայդոյից էսա խաբար, բիրդան շֆալամիշ կէլնի, կասի՝ ես պիտի խորոտմ խաոցուցիմ, տեսնամ իսոնք վով ին. տեոր կէրթան, մեյ խատ խասկնամ:

Դավրեշն ի կասի. - Ծեր ճանպախ ո՞ր թարևֆ կինի:

Հայդոն ի կասի. - Մեր ճանպախ կինի էսա թարևֆ, մենքյ պիտի էրթանքյ տեխ Սպահան քյաղքյի յան:

Դնվրեշն ի ինքյ ուր կասի՝ խա՛ վալա իսոնքյ պիտի էլնին իմ փդոածնիր, ալա խաոցուցիմ:

Դնվրեշն ի կասի. - Տյուքյ էն յան ի՞նչ պան ունեք, վի՞ր կխաոցուցեք. վո՞վ կուզեք, ասեք ես ծե սալախ տամ. ես էն տեխրանքիցն իմ:

Հայդոն ի կմտածի կասի՝ ասիմ, չասիմ, կդառնա ուր նաֆարին կասի. - Ուսե՛փ. տյու ասա:

Ուսեփն ի կասի. - Տյու գիտես, աղա՛, ես ի՞նչ գիտեմ, ինչխ գիտես ըսկուն էլ ասա. ի՞նչ պիտի էլնի:

Հայդոն ի կասի. - Ասեմ. էլ վով գիտի բալքյիմ էսա դավրեշ կիտի մեյ սալախմ տա. էրթան շուտմ կնդնինք:

Հայդոն ի կասի. - Դավրեշ բաբաս, գիտես մենքյ ինչի յինք էլե ինգյե ճանպնախ. էն էլ վիր խամար:

Դնվրեշն ի կասի. - Վի՞ր, ասա տեսնամ. խենքյ, ավատա. որ ես ճանչնամ:

Հայդոն ի կասի. - Ըստուց մեկ ամիս առաճ, ըստեղ Ալատաղ անունով մեյ տեղ'մ կա. ես կնացեր ի էնտեղ ֆոալ, էն թարաֆից տեսա քառսուն խատ ծիյավոր էկան, էկան առանց պարև տալու ընցան կնացին. ես էլ տեսա, որ իսոնքյ պարև չտվին. ըսկուն ընցան կնացին, ասի՝ իսոնք անպատճառ ջառդ ին: Ասի՝ իսոնք ի՞նչ պանն ունին մեր թակավորի խողի մեջ, ինգյա իսոնց ետև, ասի՝ տյուք վո՞վ եք: Իսոնքյ էլ դառցան վեր ինոնցան, ճոչ քաշեց ուր թուր. իզարկ մեջ իմ գյլխուն. իմ գյլեոխ արաց էրկու տապակ: Սորա քիչմ կնացին, մեկն դառցավ էկավ իմ յարեք կապեց, զիկ առեց կնաց ինոնց մոտ, նստցուցին խաց պանն տվին կերա. սորա ինոնց ճոչ խարց-փորձ արաց զիկ, սորա ասաց՝ դե կնա քո թակավորի պարեով արա: Ես էլ ասի՝ աղեկ, ես էրթամ իմ թակավորին ասիմ, համան տյուք ասեքյ տեսնամ. խենքյ վո՞վ եքյ, որ նոր ասեմ: Իսոնց ճոչ վերաց ասաց՝ ես որ կամ՝ Սպահան քաղքի սաղրազնամի ախչիկ Սուսամբնար խանմն եմ: Ես ախչիկ եմ, տյու զիկ ըսկնա մի տեսնա, ես չէ ինգյեր իմ էսա սարեր-քարեր շառդութեն անելու խամար, ես ավքյարից իմ արե էսա պանն. իմ խոր ջիգրու: Ես էլ ասի; ինչի՞ քո խոր ավքարից ես արե. ասի՝ էսա ի՞նչ պանն ի, որ ախչիկ խոր մոտեն էլնի ինի էսա սար քար. ասաց իմ խեր զիկ կանչեց, ասաց՝ քյե պիտի տամ թակավորի տղին: Թակավորն ի խնպար էորեոխկե ուզե: Նս էլ, ասաց, տեսսա. որ թակավորի տղեն չաչալ էր. ասի՝ աղա. ես էն չաչլուն չեմ առնե. ես իմ սոտով մեկ կէլնի կառնեմ, չայնամ թե աղքատ կէլնի. թե չէ՝ ես էն չաչլին չեմ առնե. իտոր վերեն իմ խեր պարկացավ իմ վերեն. ասաց, որ տյու քյո գյլխու եա. յա՛ պիտի էն թակավորի

տղեն առնեա. յա՛ չէ՝ էլ իմ տուն չեա մտնե: Իտոր վերեն ես էլ ինգյեր իմ էսա սար քար. տեսնամ խենքյ վո՞վ իմ սրտով կէլնի. որ ես էլ ինոր առնեմ: Ես էլ տեսա. որ աշարի բելա խորոտ ախչիկ էր. ասի՝ ես էրթամ տուն իմ յուրեքյ ժրին. որ գյամ քյե կնդնիմ զիկ կառնե՞ս, ասաց՝ խա՛, ես քյե կառնեմ. քյե խավնա: Ես էլ էսա էլավ մեկ ամես ի. որ պառկեր ի գյեռ ժրա: Մ'կա էլեր իմ. ինգյեր իմ ըստեխ-էնտեխ՝ տեսնամ խենքյ որտեղ կանամ կնդնի Սուսամբար. ըսկնա հաստատ խոսքյ ինքյ տվե. որ մեր մատնիկներն էլ մեյ մեկելու խետ փոխեր ենքյ:

Դավրեշն ի. որ կլսե էսա պատմութեն, կասի՝ վալա կնդա. իմ փտոածն էլ էսա ի:

Դանվրեշն ի կուզի, որ էսա լաճուն կուրիսցուցի, կասի. - Գիտեք տյուք ո՞ր ճանմխով պիտի էրթանքյ. որ կընդնեքյ ինոր:

Հայդոն ի կասի. - Ո՞ր ճանմխով, դանվրեշ բաբա:

Դանվրեշն ի կասի. - Էսա սար կտեսնաքյ, կէրթաքյ էդա սար կընցնեքյ, էն մեկէլ իրես, էնտեղ ճոչ պախչեմ կա. էդա պախչի մեչ կէրթանքյ, կնայեք էնտեղ ավուզմ կա. ինոր մոտ էդա պախչեն որ կա դևերուցն ի: Դևեր կուգյանն էնտեղից ճյուր կտանին. ճյուր տանելու գյանխ ինոնց կխառցուցեքյ, ինոնքյ ծե կասեն. մենակ ինոնքյ գիտեն. ուրեշ մարթ էլ չգիտե:

Դանվրեշն ի էսա խանպանր կասի. կպոծնի: Էն կասի ինքյ ուր՝ գյեռ ես պոծա, իսոնքյ կէրթանն էնտեխ զաթի յա՛ պիտի մեռնեն, յա՛ ինին դևերաց ծեռ, էլ չկանան տյուս գյա: Կդառնա Հայդոյին կաց պարև կանի. կինի ճանպանխ. քիչմ կէրթա, ճանպանխ կշեղի դողրի կդառնա ետ, կէրթա Սպահան՝ ուր անֆանդու մոտ խանպանր տալու:

Հայդոն ի խետ կլսի, որ պիտի էրթան դևերաց մոտ, կչպխախորի, կդառնա ուր նուսֆարին կասի. - Ուսե՛փ, ի՞նչ կասես. մենքյ էսա պանից կանանքյ տյուս գյանլ:

Ուսեփն ի կասի. - Աղա՛, տյու մառախ մ'ասնե, էն որ դու կուզես մայան Սուսամբանր կնտնես. էրթանքյ ի՞նչ որ էլե կպիրենքյ:

Կէլնին ծիյանքյ կթանմքյին. կխեծնեն, կինի էդա սարի ճանպանխ կպոնին կէրթան: Կէրթանն, կէրթանն էդա սար կընցնին էն մեկէլ իրես, կտեսնան, որ անղորթմանց մեյ խատ ճոչ իգյիմ կա, խանզարավոր պերք պանրեով: Կէրթանն կմտնեն էդա պախչեն. Հայդոն կպառկի ավուզի մոտ, ծառիմ տակ կքնի. Ուսեփն էլ կչլտվի. կմտնի էդա ավուզի մեչ, կբաշլայի լոխկնալ:

Ուսեփ լոխկնալու գյանխ կտեսնա. որ էն թանրանֆից մեյ խատ դևմ մեյ խատ ճոչ գյեռմշու տիկմ առե կուգյա, որ ճյուր տանի:

Դև կուգյան. կխասնի էդա ավուզի մոտ, կտեսնա, որ մեյմ իկե մտե ուրենց ավուզ կլոխկնա. կմոտոխասնա, որ ճյուր լցի տանի:

Ուսեփն ի կասի. - Տու՛ լցեմ տամ: Կառնե էդա գյեռմշու տիկ, իլին կլցի. մեկ ծեռնով կթանլի էդա դևուն, կասի. - Ա՛ռ տար:

Դևն ի, որ կտեսնա էսա մարթու վոժ թյուք պերան կչորնա, ինքյն էլ չի կանա էդա տիկ տանե, ինքյ զեորեով տկի կես ճանվթալով, պոոթալով կտաներ: Որտեղ մնաց տիկ իլին, կդառտկի կես, կես կթանլի գյամակ. կառնի կէրթա. կէրթա տուն. իսկի էն մեկէլ ինգյրներացն էլ չի ասե:

Մեյ սահաթից յետո էն մեկէլ դևն կարգ ի ճյուր պերելուն, էն էլ կառնի էդա գյեռմշու տիկ կուգյան. որ ճյուր պերի. էն էլ կուգյան կտեսնա. որ մեյ խատ մարթմ մեչ ավուզին կլոխկնա. մեյ խատ էլ պառկե էնտեղ ծառի տակ, քնե: Կուգյան, որ

ճյուր տանի. Ուսեփ էդա գյոմշու տիկ կառնի. դևուն իլին ճյուր կլցի, մեյ ծեռնով կթմլի, կասի. - Առ տար:

Էսա դևն ի կտեսնա էսա լաճուն վոժ. աչկեր կմնա պաց, կառնի տիկ՝ իրար չի կանա տա. կեսաց ավելի կտարտկի. էն մեկէլ կառնի կէրթա: Կէրթա տուն, ճամա ուր էն մեկել ինգյրներաց իսկի չասե:

Սորա էն մեկէլ դևեր սրայով կուգյան ճյուր տանելու. բիթյուն էլ կտեսնան էսա պնն, ճամա ծեն չեն խանե:

Հան իտին դև որ կուգյա ճյուր տանելու, տիկ ծեռ կուգյա կխասնի ավուզի մոտ, կտեսնա, որ ի՛նչ. մեյ խատ մարթմ մեչ ավուզին կլոխկնա, մեյ խատ էլ էնտեխ. ավուզի մոտ ծառի տակ պառկե քյնե:

Էսա դևն ի կմոտոխասնա, որ տիկ լցի տանի: Ուսեփն ի կասի՝ տուր լցիմ տամ:

Դևն ի կուտա գյեոմշու տիկ, որ ճյուր լցի տա, էդա տիկ իլին կլցի մեկ ծեռով կվերուցի, կթմլի էդա դևուն, կասի. - Դե՛, առ տար:

Դևն ի, որ կտեսնա էսա մարթու վոժ, պերան կմնա պաց: Չի կանա էդա տիկ տեղից վերուցել դնել, կպռնի տկից, կեսուց ավելին կտարտկի. էն մեկէլ կառնի տգյտգյմլեն կինի ճամպախ, որ էրթա:

Ուսեփն ի էսակասնդւսր գյախ կաչկեր, որ բալգյի Հայդոն քնուց էլներ վեր, որ խարցուցեր էսա դևերաց, թե տեսե՞լ ի Սուսամբար:

Ուսեփն ի կտեսնա, որ Հայդոն ալմ քնուկ ի, կէլնի տյուս ճրից, խալվներ կխայնի, կինի էսա դևու իտև, կպռոա, կասի. - Ախպե՛ր. ախպե՛ր, կայնի քյե պնն կասեմ: Կտեսնա, որ շատ անգյնցան, ճարաճատած ինքյ կկանչի:

Դևն ի կդառնա ետ կուգյա Ուսեփի մոտ կասի՝ ի՞նչ կասես:

Ուսեփն ի կասի. - Քյե մեյ պնն խարցուցեմ, պիտի ասես դողրին, մե ըսկուն ին սալախ տվե:

Դևն ի կասի. - Ասա՛. տեսնամ, թե որ կիտեմ, կասեմ. ինչխ չեմ ասե:

Ուսեփն ի կասի. - Տյու կիտե՞ք որ թմրաֆն ի Քիշմիշ քաղաք:

Դևն ի կասի. - Էսա ծախ յանի թմրմֆն ի:

Ուսեփն ի կասի. - Էդա աղեկ, տյու զիկ էն ասեքյ, ծեր յոթ քուրերաց մեչ անպատճառ կիտեքյ կճանչնաքյ. էն Քիշմիշ քյաղքյի նազրվազրի ախչիկ Սուսամբմր, որ էսա էլմվ յոթ տարի ինգյե էսա սարեր քարեր ջառդոթեն կանի՝ թակավորի տղեն չառնելու խամար, ինչ ի չաչալ ի, տեռ՞ր ի մկա, մե ըսկմն սալախ տվին, ասին Քիշմիշ քյաղաքյ կէղնի, մղո՞րթ ի:

Էսա դևն ի կմտածի, կմտածի, կասի. - Էդա ես չեմ կիտե, էդա էրթմմ իմ քուրերաց խարցուցեմ, ինոնքյ կիտին: Էդա տեղ տյու աչկի, չյուր ես գյմմ:

Ուսեփն ի կավադա էսա ասածին, ետ կդառնա կուգյա Հայդոյի մոտ, կաչկի չյուր էսա դև գյա:

Դևն ի կուգյմ տուն, խմպմր կպերի ուր քույրերաց, կասի. - Աստված ծեր տուն քակի, էլե՛ք տեսեքյ վո՞վ ին իկե ծեր բար-պմխչեքյ, - ըսդուն կասի, կասես թե ինոնքյ չեն տեսե. Էսա դևն ի կասի, - կնացի ճրու, տեսա, որ էնտեղ մեր ավուզի մեչ մեյ խատ մարթմ կլոխկըներ, մեյ խատ էլ ավուզի մոտ ծառի տակ պառկեր ի, քյնե. ես կնմցի, որ տիկ լցեմ պերեմ, էսա ավուզի մեչի մարթ ասաց՝ տուր լցիմ, տամ. առեց, էդա կմնդմրմկյան գյեոմշու տիկ ճրով լցեց, մեյ ծեռնով իթմլ զիկ. ասաց՝ դե՛ առ տար: Ես որ տեսա էդա կմնդմրակյան տիկ. որ կասես մեկ թուղթ պմն էլներ մունջ ըսկուն իթմլ զիկ, ես որ տեսա. աչկերս մնաց պմց: Ես սորա

տիկ կիսուց ավել տարտկեցի. նոր էն մեկել մնացած ճոռթալով-պոռթալով առեր իմ իկեր իմ: Էկյա խասա կես ճանպախ, էսա մարթ էկավ զիկ խարցուց. ասաց՝ կայնի քյե պան կասիմ: Ես էլ կայնա զիկ ասաց՝ տյու չե՞ս կիտե. մե ըսկուն ին սալախ տվե. որ տյուքյ Ռիշմիշ քյաղաքյ կիտե՞ս դեոր ի, ես էլ կիտեմ էսա ծախ յան ի: Դառցավ. մեկ էլ քիչմ կնաց. սորա մեկ էլ խարցուց. ասաց՝ տյուքյ գիտեքյ էսա Ռիշմիշ քյաղքյի սադրազամի ախչիկ Սուսամբանր. որ էսա էլավ յոթ տարի ի, ինգյեր էր սար քար. ջառդութեն կաներ՝ ինոր թակավորի չաչալ տղին չառնելու խամար. մկա որտեղ ի՝ տյուքյ չե՞քյ գիտե: Ես էլ ասի՝ չէ՛, իտորից ես խապար չեմ. էդա քույրերս գիտին մեյմ էրթամ, խարցուցեմ գյնմ քյե կասիմ. կայնի ըստեղ, չյուր ես գյնմ. մկա էդա մարթ կայնե ըստեղ կաչկի. որ ես ջուլապ տանիմ:

Էսա դներն ին. կիրիշկան մեյ մեկէլու իրես, էն մեկ կասի. - Խա՛. ես էլ տեսա. իմ տիկն էլ առեց լցեց. էլմ էլ լիք:

Էն մեկէլն էլ կասի. - Ես էլ տեսա, մեչ ավուզին կլոխկներ. որ զիկ տեսավ՝ առեց տիկ, իլին լցեց, ճընճղկի պես իթնլ ասաց՝ առ, տար: Թող էդա էնտեղ ավուզի կուշտ ծառի տակ մեյ խատ էլ ուրիշ մարթմ պառկեր էր քներ էր:

Սորա էն մեկէլներ մեյն կասի՝ խա ծառի տակն էլ մարթ կեր. մեյն կասի՝ չկեր. գյեռ վանրհասըլ կասին՝ ինչխ անինքյ. ինչխ չանինքյ, որ էսա մարթերաց ծեռնեն ազատվինքյ:

Էսա յոթ դներն ին սեչերնին խորհուրթ կանին, կասին. - Էրթանքյ էն մեկուն պոնինքյ սպանինքյ. նոր յոթս մեյդրմ կթնփինքյ վեր էն մեկուն էլ կսպանինքյ:

Էսա յոթ դներն ին կելնին խոսքյներ կանին մեկ. կէրթան որ Հայդոյին ինան Ուսեփին սպանին: Կուգյանն կխասնին մոտ ավուզ, կիրիշկան կտեսնան. որ ամղորթմանց էն մեկ ալա քյնե. էն մեկն էլ գյէռ տարբար քնշ կուգյմ:

Կուգյան էսա դներ կմոտոխասնան Ուսեփին, ծեռ կթալին, որ խեխտին:

Ուսեփն ի կիտի գյեռ դներն էկան ուր խանպանր պերին, թե Սուսամբանր այսինչ տեղն ի. ինքն էլ կելնի կէրթմ. որ խասկնա: Կտեսնա. որ էսա յոթ դներն բիրդանն կխասնին ուր վերեն կբաշլային ուր խեխտել: Խետ որ կտեսնա, որ ուր պիտի խեխտին. կխասնի էնդեղից մեյ խատ խաստ բանրդի ծառմ գյեռգյեռով կքնշի տյուս. որ իսոնց չպխի, ի՞նչ կանդանր՝ որ կանի՝ ճար չէլնե էսա յոթի վերեն, չի կանա: Հանայի. որ իսոր պոնին. էսա Ուսեփն ի հա խափս կուտա, կուգյմ կէլնի վեր էսա Հայդոյի փորին. որ Հայդոն քնուց զարթնի էլնի վեր, կտեսնա չէ՛. ալա Հայդոն խորոտ քնավ մեչն ի. մեկ էլ խափս կուտա. կուգյմ կէլնի վեր Հայդոյի փորին. էսա անգյմմ Հայդոն կէլնի վեր:

Հայդոն ի կէլնի վեր, մեյ խատ աչկեր կճմռթի, կիրիշկի դանր բանր, կտեսնա, որ էսա դներ փոթեր ին Ուսեփի ետև, հա՛ հա՛ քիչ ի մնացե, որ պոնին:

Հայդոն ի կէլնի կուգյմ վեր ավուզին, կլվացվի. իսկի կարևորութեն էլ չի տա:

Ուսեփն ի խափս կուտա. կուգյմ կզանի էդա ավուզի ճրի մեչեն կնցնի էն մեկէլ իրես:

Էսա դներն էլ կուգյանն. որ Ուսեփին պիտի պոնին: Խետ որ կխասնին ավուզի մեչտեղ. չեն մտնի ճյուր, էսա Հայդոն ի համան էրկու դև մեյ ծեռնով, էրկու դևն էլ մեկել ծեռնով կպոնի. կուտա իրանր կանի խոչ, կթանլի էնտեխ:

Էսա իրեքյ դևն ի. որ կտեսնան ուրենց իրեքյ քույրերաց արաց պրտուճմ խոչ էսա մարթ, ուրենքյ էլ ի՞նչ կանան անի, նաչարյութ կէլնին ծնգյներաց վերեն կուգյանն մոտ էսա Հայդոն. ներողութեն կխնդրին, որ ուրենց պաշխի. ի՞նչ ի իր ուզած՝ տան:

Հայդոն ի կասի. - Ես ծիզնից կուզեմ Քիշմիշ քյաղքյի սադրազումի ախչիկ Սուսամբար. որտեղ որ ի պիտի ասեքյ, թե որ չասեքյ՝ ծեր իրեքյիռ վիզն էլ կկտրեմ:

Էսա դներն ի ճարեր կկտրի, կասին. - Էդ էլ ապա՞ն ի, կտրիճ. որ տյու կուզիս. - կասին, - մենքյ չենքյ գիտե տեոր ի. համա քյե կասինքյ. թե վո՞վ գիտի:

Հայդոն ի կասի. - Դե՛, շոտ ասեքյ:

Ճոչ դևն ի կասի. - Կտրի՛ճ, կէրթաս էսա ճանապախ, դողրի կպոնես կէրթաս. մեյ խատ գյետմ ռաստ կուգյա, էդա գյետ կընցնես էն մեկէլ իրես. քիչմ էլ կէրթաս. կընցնես չուրի Քիշմիշ քյաղքյի խեչ, էնտեղ այա չխասած քյե ռաստ կուգյա մեյ խատ քյաղաքյ, էդա քյաղքյի մեչն էլ կա մեյ խատ մարդանմուշ դև. Սուսամբար որ իկա իտոր խեչ, էդա դև պոնե պախե ուր մոտ, չի թողնե պաց. կուզի խետ պսայվի. համան դևու կնիկ չի թողնե. գյեռ էդասկնա մնացե. չիմ կիտե մկա ինչխ էլե. ինորից կանաս մենակ խասկնա. թե որ դմ յի՝ զաթի դա յի, թե որ չէ ինորից թե որ չխասկնաս՝ ինոր կնիկ գիտե անպաճառ:

Հայդոն ի, որ էսա պան կլսի, շատ կուրախնա, կպոնի էսա իրեքյ դևերուցն էլ կմորթի. կէլնի ուր ծին կխեծնի խետ ուր նաֆարին կինի ճանապախ կէրթա:

Շատ կէրթա, քիչ կէրթա. աստված կիտի, կէրթա վարհասըլ կխասնի էդա գյետ, կընցնին էդա գյետ քիչմ էլ կէրթան. կէրթան. կխասնին ամորթմանց էդա քյաղքյին: Ալա քյաղքյին չխասած. կասին. - Ի՞նչխ անինքյ, որ ներս մտնինքյ:

Ուսեփն ի կասի. - Աղա՛, ես կասիմ դողրի. էրթանքյ էդա դևու տուն. էլնինք կոնախ. որ պանն ի խարցուց ասաց՝ ինչի՞ խամար եքյ իկեր, վերնից կվախենանքյ, կասինքյ դողրի դողրինու, թե Սուսամբարի խամար ինքյ իկե. այսինչ դևեր մե ասին. թե քյո մոտն ի, տուր տանինքյ. յա՛ տուր. յա՛ էլի գյուոզ թալինքյ:

Հայդոն ի կասի. - Խա՛, վալա, սալամաթ էդա յի. էն գյախ դևն էլ կզարմանա. թե իսոնքյ ի՞նչ կանտնար կտրիճ ին, որ էկեր ին մեյ բանշ կուզին:

Կասին կէլնին. հայդե բաբսամ կմտնին քյաղաքյ: Իսոր կխարցուցին, ինոր կխարցուցին դևու տուն, վանրհասըլ սալախ կանին. կէրթան դողրի դուռ կդփին. կմտնին տուն, կպոծնին, կդառնան կասին. - Կոնախ չե՞ք ուզե:

Դևու կնիյն ի կասի. - Ինչի՞ չէ, վաղուց կեր մարդ-մարդախոտ չենքյ առե. իկեքյ ինչի չէ. մեր գյլխուն, կոնախ աստծուն ի:

Հայդոն ինանն Ուսեփն ին, կէճնին տակ ծիյայհտերաց, կտանին ծիյեր կկապին փաքյախ. կորմ պանն կուտան կուգյան. կնստին:

Իրիկուն ի դևն ի կուգյան. դև դոնից չի մտնե ներս, կնգյան կասի. - Կնիկ էսա ի՞նչ մարդախոտ ի կուգյան:

Կնիյն ի կասի. - Էրկու խատ կոնախ իկե մեր տուն էսօր:

Դևն ի գյեռ կդաստրի խետ կլսի, կասի. - Իսոնքյ վո՞վ ին, որ ըսկնա առանց վախնալու իկեր ին մե կոնախ:

Կնիյն ի կասի. - Էրկու խատ խորոտ մարթ ին, չեմ կիտի վով ին:

Դևն ի կուգյա կմտնի ներս. պարև կուտա իսոնց. կասի. - Խավքն ուր թևով, օցն ուր պորտով ըստեղ չէր կանե գյե. տյուքյ ի՞նչխ եք իկե:

Հայդոն ի կասի. - Մենքյ էկանքյ. մենք իկեր ինքյ համ քեզնից պանն պիտի տանինքյ՝ ախչիկ:

Դևն ի կասի. - Ի՞նչ ախչիկ, ես ախչիկ չունիմ. տյուքյ էլ պարով եք իկե, իմ իրիկվան. առատվան ընթրիսներ:

Հայդոն ի կասի. - Մենքյ իկեր ինքյ, Սուսամբար քյո մոտն ի, որ պիտի տանինքյ:

Դևն ի կասի. - Վո՞վ ասաց. թե Սուսամբանր մո զիկ ի:

Հայդոն ի կասի. - Էնա գյիտի էն մեկէլ իրես յոթ դևեր կին. ինոնքյ ասին. որ քյո մոտն ի. մենքյ էլ դողրի էկանքյ ըստեղ:

Դևն ի կխասպի, կասի. - Խա՛, մո զիկ ի. համա չեմ իտա:

Հայդոն ի կասի. - Մենքյ իկեր ինքյ. որ պիտի տանինք. թե՛ զոռով էլե, թե՛ յոլով պիտի տանինք. թե յոյով չես իտա. պիտի էլնես գյուռզ թալինքյ. վո՛վ որ յաղթի՝ ախչիկ ինոր:

Դևն ի կասի. - Խա՛, էդա իմ կանպյուլն ի:

Կէլնին ուրենց պատրաստութեն կտեսնան. որ գյուռզ թալին, վով որ հաղթի՝ ախչիկ ինոր էլնի:

Դևն ի Հայդոյին կասի. - Էնա քո մեկ ինգրոչ ձեռքեր պիտի կապես. որ չի գյա քյե օքնութեն:

Հայդոն ի կասի. - Խա՛:

Կպերին Ուսեփի ծեռ. ոտ կկապին կթալին էնտեղ:

Դևն ի ուր կնգյան կսովրցուցի. կասի. - Որ մենքյ կէլնենքյ դուրս. տյու էսա մեկու ջանդակ կանես չորս կտոր, կտանես մեր տանսի չորս արաբախների քեռշեք կկախես, որ էսա մարթ գյա տեսնա ուր վոժ գյեռ դատրի:

Կնիյն ի կասի. - Աղե՛կ:

Հայդոն ի կառնի ուր գյոտզ. կէլնի տյուս:

Դևն էլ ուր կառնի. կէլնի տյուս:

Էփեջն կզնտանան. էսա դևն ի կդառնա Հայդոյին կասի. - Դե՛. կնա իմ տան աթրնֆ տես, որ վերչեն չասես, թե մարթ էկավ պան էր արե:

Հայդոն ի կէլնի կէրթն էսա դևու տան ինթրաֆ-թնրնֆ կֆոա կուգյն. էսա մեկէլ երես կտեսնա, որ Ուսեփ ինան էսա դևու կնիկ նստեր ին էօդի փանջարեն. արաղ կխմին. քեռֆ կանին. աստված կկանչին. որ դև հաղթվի:

Հայդոն խետ կտեսնա իսոնց. վոժ կէլնի մեյն էրկու. կդառնա կուգյա դևու մոտ. կասի. - Կնացի տեսա չա չկեր. մեյ խատ էլ տյու կնա տես. չէլնի ասես կնանց մեյ պանն արաց:

Դևն ի կուգյն կֆոա տարբար կտեսնա. որ փոխանակ ուր կնիկ էդա մարթու ջանդակ չորս կտոր անելու. որ կախեր տանսի քեռշեք. կտեսնա գյեռ մարթու ծեռ ոտ գյակե նստեր ին էօդի փանջարեն արաղ կխմին. քեռֆ կանին: Մեյ թնրնֆից էլ աստված կկանչին. կասին՝ աստվա՛ծ, դև հաղթվի:

Խետ որ կտեսնա քեռչվեր կառնի գյետին վոժից կես կդատրի: Կասի՝ աղեկ տյուք արեքյ ծեր ուզած, ես մեյ խատ թե որ սաղ սալամաթ դարցա ետ, ես ծեր պաս կէփիմ: Կասի, կդառնա ետ կուգյա:

Դևն ի կդառնա ետ կուգյա:

Կբաշլային գյոտզեր թալել:

Հայդոն ի կթնլի գյուռզ. էսա դև ծեռ կուտն դեմ:

Դևն ի կթնլի գյուռզ. Հայդոն ի ծեռ կուտն դեմ:

Ջմեն մեկ գյուռզ էրկու խարեր կետր:

Իրեք չորս սանհնթ ըսկնա մեյ մեկէլու կզնին, ճար չելնե, նն՛ էն ինոր կանա պոնցուցել, նն՛ էն ինոր կանա պոնցուցել:

Կտեսնան որ չէլնի՝ գյուռզեր կթնլին էն մեկէլ տեխ, կբաշլային գյլհուշտիա:

Վարհասըլ Հայդոն ի էսա դևուն կթնլի գյետին. կասի. - Սպանե՞մ:

Դևն ի կասի. - Սպանի՛:

Հայդոն ի իրեք անգամ կխարցուցի, կասի. - Սպանե՞մ:

Դևն ի կասի. - Սպանի՛:

Հայդոն ի կքաշի մեչքից դանակ. էսա դևուն կանի թիգյա-թիգյն:

Հայդոն ի կդառնա կուգյն. կտեսնա. որ Ուսեփ ինաւ դևու կնիկ իկեր ին վեր դոան. Հայդոյին կուչքին:

Հայդոն խետ կմտնի ներս. իսոնք ուրախութենե կպոնին Հայդոյի ծեռքեր կպաքյին:

Ջաթի Ուսեփ ինանն էսա դևու կնիկ մեյ-մեկէղու վերեն սիրահարվեր ին, խոսկ ին տվե. որ մեյ մեկէղու սոնին:

Հայդոն ծեն չի խանի. կասի. - Աղեկ եք արե:

Կդառնա էսա դևու կնգյան կասի. - Աղեկ. ապա ուր է Սուսամբար. դե որտեղն ի ասա, որ առնինք էրթանք:

Դևի կնիյն ի կասի. - Էօդեն ի. էրթանքյ պիրենքյ:

Կէլնին, որ էրթան էօդից պերին. կտեսնան, որ դավրեշմ առե Սուսամբար կայնե էրեսպաց խանպար կուտա:

Հայդոն ի խետ, որ կտեսնա իսոնքյ. էրկուսն էլ կճանչնա, դանվրեշին էլ Սուսամբարին էլ:

Դանվրեշն էն դանվրեշն ի, որ ճանպախ ինոնց ռաստ էկավ:

Հայդոն ի խետ կտեսնա կվանզի կէլնի վեր. որ պոնի իսոնց:

Էսա դանվրեշն ի խետ Հայդոյին կտեսնա. էն էլ ինոր կճանչնա, խետ որ կտեսնա, որ Հայդոն կէլնի վեր՝ բիրդանն ինք կէլնի կորցնեք Սուսամբարին էլ կանի ճնճղուկ. կառնի մեջ էրկու ոտաց կթոնի. կէրթան:

Հայդոն. էսա դևու կնիկ, ինանն Ուսեփ. կտեսնան աչկեր կմնա պանց:

Էսա դանվրեշ ֆոացեր էր. ֆոացեր էր մանյար իկեր էր էսա Սուսամբարին գյեռ առեց տարավ:

Հայդոն ի կշշկոի կկայնի. կասի. - Իսոր էլ որտե՞ղ կանանքյ կնդնե:

Դևու կնիյն ի կասի. - Գիտե՞ս. կտրիճ. իսոնք դեոր կնանցին:

Հայդոն ի կասի. - Դեո՞ր:

Դևու կնիյն ի կասի. - Իսոնքյ կնանցին ուրինց քյաղաքյ՝ Քիշմիշ քյաղաքյ. ինոր խեր մարթ էր իսկե Սուսամբարի ետև. որ տաներ. մանյար էսա դանվրեշ ինոր խամար էր էկե:

Հայդոն էլ կասի. - Խա՛. ընկուն կէրևա զիկ. ճանպախ որ ռաստ էկանքյ ընկուն մոտոխաս խանպար կուտեր:

Կասե. - Տյու կիտե՞ս Քիշմիշ քյաղքյի ճանպախ:

Դևու կնիյն ի կասի. - Խա՛. ծեր ի՞նչ պանն ի, ես ծե տանեմ դողրի Սուսամբարի խոր դոան վերեն:

Հայդոն ի կասի. - Դե՛, հազրվենքյ, որ ինենքյ ճանմպախ էրթանքյ. անգյան ի:

Էն մեկէղ օր առավոտուն ուրենց ծիյանք կխեծնին, էդա դևու կնիյն էլ կառնին խետըրներ, կէլնեն իրեքյ խոգյի. կինեն ճանմպախ, կէրթան: Կէրթան կխասնին Քիշմիշ քյաղաքյ, կէրթան մեյ պառվում դուռ կդփին, պառավ կուգյն դուռ կպանա:

Հայդոն ի կասի. - Պարև՛ քյե պառավ, կոնախ կուզե՞ս:

Պառավն ի կասի. - Աստծու պարին. ինչի՞ չի, - կասի, - կոնախ աստծուն ի, համան էդասկնեմ, տեղ չունեմ. որ բիթունիդ էլ ներս առնեմ:

Հայդոն ի կասի. - Պառավ. էսա պուդուկ ճըլոր թյալ էնտեխ. մե խերիքյ ի. մեյ կտոր կծվարինքյ մեյ քանիմ օր. կէրթանքյ:

Պառավն ի կասի. - Ի՞նչխ կէլնի. ես ըսկնեմ փարա յիմ տվե:

Հայդոն ի կխանի խուռջին. մեկ ճանգյ ոսկի կուտա, կասի. - Ա՛ռ էսա ոսկիք. էդա տեղ ի՞նչ կանդար որ աման-չաման կա. թալ դուս. մե տեղ արա. նոր վաղ էն մեկէլ օր թազա կառնես:

Պառավն խետ ոսկուն չխչխկոց կառնի. կէլնի. համան ինչ կա. չկա կթյալի դուս. իսոնց տեղ կանի:

Կէլնին մեյ խատ քյաղքյի մեչ կփռան, կլսին որ սադրազամի ախչիկ Սուսամբյար էլավ էսա մեյ քյանի օր ի իկեր ի, մկա խոսկ ի տվե, որ թակավորի չաչալ տղին պիտի առնի:

Հայդոն ի իրիկուն կուգյա տուն, պառվուն կասի. - Պառա՛վ. էսա ի՞նչ խյապյար ի, կասին թակավորի լաճ կպսայվի վեր սադրազամի ախչկան. էն ախչիկ որ էսա յոթ տարի էլավ չյառդութեն կաներ:

Պառավն ի կասի. - Խա՛, սադրազամ տեսավ, որ ճար չկա, էլավ մեյ խատ դյավրեշմ կնդավ, իսկեց քյաղքյե քյաղաքյ. սար. քար. ասաց. - Յա՛ իմ ախչիկ կկնդնես. պիրես, յա՛ վեր խիտ որ նշանվի ինոր սպանել կուտաս կամ սաղ-սաղ կպռնես կպիրես: Մկա էդա դյավրեշ կնաց հա՛մ Սուսամբյարի նշանած կնդավ իտուր դներաց սպանել, հա՛մ դա էլ Սուսամբյար կնդավ առեց էկավ: Մկա Սուսամբյար որ իմացավ, թե ուր նշանած սպանվե, էկավ խոսկ իտուր խոր. որ պսայվի, տեսավ որ էլ ճար չկա: Մկա ինոր խարսնիս ի:

Հայդոն ի կիմնա, որ դողրի էն դյավրեշն էր, որ ճյմպախ ինոր խարցուցինքյ, կասի. - Ի՞նչխ անինքյ, ի՞նչխ չանինքյ, որ ազատիքյ Սուսամբյար. փախցուցինքյ:

Դևու կնիյն ի կասի. - Մյառյախ մ'անե, էդա վեր զիկ:

Հայդոն կասի. - Ի՞նչխ տյու կանես:

Դևու կնիյն ի կասի. - Խա՛ քյե դյավի չկա. համա ես քյե ինչխ կասեմ ըսկուն արա:

Հայդոն ի կասի. - Աղե՛կ, մենակ թե Սուսամբյար ծեռ պիրենքյ:

Դևու կնիյն ի կասի. - Կէլնինք, ես ինան տյու կէրթանքյ թակավորի տուն, թող Ռսեփ մնա ըստեղ. մեր էլած. չէլածին մույաթ մնա, մենքյ կէրթանքյ կմտնենք թակավորի տուն. կէրթանքյ դողրի փագյախ, էնտեղ թակավոր, ուր տղեն, սադրազամ, ինչ կանդար որ ճոչ կա գյեռ իկեր ին փագյախ տեսնան խենքյ. որ ծին որ խեծնի. էրթան ժամ պսայվին: Էդա դյավրեշն էլ էնտեղ կէլնի, խետ որ քյե տեսնա, կճանչնա. տյուն էլ ինոր: Էնգյախ ինոր ծեռ ճպոթմ կա, կզյանի վեր քյո քյամկին, տյու կէլնես ծի, խետ որ էլար ծի. էդա դյավրեշ թակավորին կասի՝ գյյամ պերեքյ էսա ծին թող փեսեն նստի, էնգյյախ կասի՝ Սուսամբյարի նշանած գյեռ էսա յի: Էնգյյախ. որ գյյամ դրին պերսնդ, էլ փոթնում չկա, տյու կմնաս ծի, համան տյու մյառյախ մ'անե. ես էնգյյախ քյե կանիմ գյեոմեշ. խետ որ կէլնես գյեոմեշ, բաշլայի. քյո կոտոշներով խասնողին զյարկ: Էն գյյախ էդա դյավրեշ կասի՝ յուղար պիրեքյ. դրեք վիզ, տարեք դաշտ: Չուր յուղար կնդնին զհւր հյաննհուն որ պիրեն, տյու ի՞նչ կյանդյար որ կանաս շոտ-շոտ տար կուտշի տակ. խետ որ պիրեն, էս քյե էնգյյախ կանեմ օց. որ կէլնես օց, տյու բաշլայի իսոնց ոտքեր որտեղ որ կխասնես կծի: Դյավրեշ էնգյյախ կիմնա, որ քյո մատնիկ Սուսամբյարի մոտն ի. կասի՝ կնացե՛քյ, Սուսամբյարի մոտից մատնիկ պիրեքյ: Չուր ինոնց էրթալ մատնիկ պերել

տյու էփեջա մարթու ոտքեր կկծես: Խետ որ մատնիկ պիրեն. աչկ նշւնց տան, այու էնգյախինե կմեռնես, ճասա մն՛ վախենա, ես չեմ թողնե. էն գյախ ես քյե կանեմ բազե, զաթի բիթիւն էյ, որ կծեր իս. որն կուտշով իս զարկե, իդա ճըլի մեչ մնացեր ին. մենակ թակավորի տղեն ի արա կընցի փախի. ես որ քյե կանիմ բազե. կինես ինոր իտև կէրթաս կնստես վեր ինոր չաչալ գյլխուն. կկդցես. էն կանդըր կկդցես. չյուր էն էլ կմեռնի. նոր կուգյըս կնստես վեր Սուսամբըրի օդի փենշարի վերեն. էնգյախ Սուսամբըր փենջարեն կպանա, տյու կմտնես ներս. կթառիս վեր ինոր յաթղին. որ էնգյըխ կէլնես մարթ, զւթի էնգյնխ կճանչնաք մեյ մեկըլու. խնպըր կեորեոխկե մե. մենքյ կուգյանք. ծե կառնենքյ կպերինքյ:

Հայդոն ի կասի՝ աղեկ, ինչխ որ ասիր՝ ըսկուն էլ կանեմ:

Էն մեկէլ օր ւսռավոտուն կէլնին ուրենց խալվներ կփոխին. էրկուսն էլ մարթու խալավ կխայնին. կէրթըն թակավորի տուն: Դոնից կմտնին ներս. կէրթըն դողրի վեր փախի դռան, կտեսնան, որ ւնղորթմըներ թակավոր, ուր լաճ, նազր-վազիր, ճոչ մարթեր ինւսն էդա դըվրեշ, կայներ ին մըշվըրաթ կանին. խենքյ որ ծին լաճ խեծնի, որ ախչիկ. որ էրթըն ժում պսայվին:

Հայդոն ինան էդա դևու կնիկ խետ որ կմտնին ներս, էսա դըվրեշն ի խետ տեսնալուն Հայդոյին կճանչնւ. գիտի գյեո Սուսամբըրի ապովն իկե, բիրդըն ուր ծեռւց ճպոթ խետ խասնելուն կզըռնի վեր Հայդոյի քյըմկին. կանի մեյ խատ խորոտ կըռ ծիմ: Կդւսռնւ իդա տեղաց ճաղամաթին կասի. - Կնացեքյ, ոսկի գյըմ պիրեքյ, դնենքյ էսա ծիյու պերան, էսա ծին զմենից խորոտ ի:

Դըվրեշն ի էսա որ կասի, կկանչի Սուսամբըրի խոր կասի. - Այ թակավոր ապրած կէնաս. Սուսամբըրի նշանած որ կեր՝ էսւ էր. իկեր էր խասեր էր ըստեղ. որ տաներ. ես խետ տեսա, ճանչցա, արեցի ծի. պերեքյ էսա փեսին լայեղ պըն ի, թող էսա փեսեն խեծնի:

Կէրթըն ոսկի գյըմ կառնին կուգյըն. որ պիտի դնին ծիյու պերան, էսա դևու կնիկ ուր ոտաց մատի ծերերով կզըռնի ծիյու ոտկերաց. կասի՝ կուզիմ գյեոմեշ:

Հայդոն ի կդառնա մեյ խատ չընգոդայի գյոմեշմ, կբաշլայի բըռնողին առնել վեր կուտշին, թըլել էնտեխ: Վուրու՛ն քիթ. վուրու՛ն պերան, վուրու՛ն ոտկեր. վըրճըսըլի զմէնին մեյ պըն կէլնի:

Էսա դըվրեշն ի խետ կտեսնա, որ էսա լաճ դարցավ գյեոմեշ, կասի՝ անպաճառ ըստեղ ուրիշ դսե յէլ մարթ կա:

Սորա կասի. - Կնացե՛քյ շոտ յուլար պերեքյ, թըլեքյ վիզ, տարեք զինեք:

Չյուր յուլար պերել. լաճ զաթի էփեջը պըն տեսե, թակավորուն էն մեկելներաց էփեջա գյետին փռե:

Ցուլար որ կառնին կուգյան. որ պիտի թալին էսա գյեոմշու վիզ, առնին էրթան. ճաման էսա դևու կնիկ ոտաց մատի ծերերով մեյ խատ էլ կզըռնի էսա գյեոմշու ոտկերաց. կասի՝ կուզիմ էլնես օց:

Էսա լաճն ի բիրդըն կդառնա օց: Խետ կդառնա օց. կբաշլայի էդատեղաց մարթերուց բիթնի ոտքեր կծել, ո՛րն կպոռա, կփախի, ո՛րն կուլա. վըրճասըլ շշկոեր ին կայներ ին: Էսա դըվրեշն ի խետ որ կտեսնա նա էսա լաճ դառցավ օց, ճաման կիմնա որ էսա լաճու մատնիկ մոտ Սուսամբըրն ի, խնպար կեորեոխկի կասի. - Սուսամբըրի մստի մատնիկ շոտ պիրեքյ:

Խետ որ էն մատնիկ ւպերին մուչ մստնկի ակ շանց տան օցին. օց ուր տեղ կխալի:

Կէրթան Սուսամբարի մոտից մատնիկ կխանեն պերեն, խետ որ կուտա̈ն էսա դավրեշու ծեռ, որ դավրեշ շանց տա: Համան էսա դնու կնիկ ոտաց մատի ծերով կզա̈նի օցին, կասի՝ կուզեմ էլնե բազե: Հայդոն ի կէլնի մեյ խատ բազե. կէրթա, կկպնի վեր թակավորի տղի չաչալ գյլխուն, կբաշլայի կտցել: Էնկյա̈նդար կկտցի, չյուր էդա լաճն էլ կինի էդա տեղ. կմեռնի:

Էսա թակավորի տղեն որ կտեսնա, թե ծին դառցավ գյեռմեշ. գյեռմեշ դառցավ օց, ճափքաշին կկծի, ինք թողեր էր. փախեր էր դուս, որ ուր չկծի, իտոր խամար դնու կնիկ արավ բազե իտոր, որ էրթա կտտելով մեռուցի:

Դնու կնիյն ի կտեսնա, որ դա̈վրեշ ուրիշ ճար չի կանա անե, կուզի դառնա առծիվ, որ էրթա բազեին փօփոթի, կիմնա, ուր ոտաց մատի ծերով կզա̈նի էսա դա̈վրեշին, կասի՝ էլի սև քար: Կէլնի սև քար. կմնա էնտեղ տենստեղ:

Բազեն ի կկտցի, կկտցի թակավորի լաճու գյլեոխ չյուր կմեռուցի:

Դնու կնիկ ասեր էր Հայդոյին. - Եփ որ կդառնաս բազե. կտցելով կմեռուցես թակավորի տղին, ընդուց սորա կթռնես, կէրթաս Սուսամբա̈րի էօդի փենջուրի վերեն կթառես, Սուսամբա̈ր էնգյուփ ուր էօդի փենջա̈րեն կպանւս քյե կառնի ներս. էնտեղ կէլնես զաթի մարթ:

Հայդոն ի թակավորի լաճուն կտցելով կմեռուցի. ինորից սորա կթռնի կուգյա Սուսամբա̈րի էօդի փենջուրի ճաղի վերեն կթառի:

Սուսամբա̈ր ի խետ որ կտեսնա ուր փենջա̈րի վերեն բազեն թառե, կասի. - Վալա՛ էսա Հայդոն ի էկավ զիկ կտավ:

Փենջա̈րի դուռ կպա̈նա, բազեն կառնի ներս: Բազեն խետ կմտնի ներս, կէրթա̈ կնստի Սուսամբարի յաթղի վերեն: Խետ կնստի յաթղի վերեն, կդառնա մեյ խատ խորոտ, սիրուն, ջահել երիտասարդ:

Սուսամբա̈րն ի խետ կտեսնա, էսա մարթուն կիրիշկա. որ ա̈ղորթման Հայդոն ի, կէլնի կվա̈զի մոտ. կպաքվռդվին, կուրախնան մեյ մեկէլու վերեն:

Դնու կնիկ զաթի դառցե էտ կնացե պառվու տուն նստե Հայդոյին կաչկի, որ գյա̈ն էրթան:

Հայդոն ի կէլնի փեսի շորեր կխայնի, Սուսամբա̈րն էլ խարսի խալվներ, կէճնին տակ, սա̈նքի կէրթա̈ն ֆռալ: ՙԼով կիտի վո՞վ ի, կա̈րակոլներ կասին. - Գյեռ թազա խարս փեսեն ին, զայիր կէրթան ֆռալ, ճա̈նպախ կուտան, սալամ կպռնին չուր իսոնք ընցնին:

Հայդոն ի կառնի Սուսամբա̈ր դողրի կուգյա̈ն պառվու տուն:

Էդա տեղ կէլնին ուրենց պատրաստութեն կտեսնան, կէլնին կխեծնին ուրենց ծիյանք, էդա ա̈յքա ոսկին էլ կուտան պառվուն, կինի ճա̈նպա̈խ, որ գյան ուրենց քյաղաքյ՝ Սպահան, նոր էնտեղ պսայվին:

Ծիյանք կխեծնին, պառվուն կնացպարև կանին, կէլնին չորս խոգյով կինին ճա̈նպա̈խ, կէրթա̈ն. կէրթա̈ն, կէրթա̈ն կխասնին չյուր ուրենց քյաղաքյ Սպահան, սաղ սա̈լա̈մա̈թ:

Սըռ քյաթըպին իկե, ուրախութնե կբաշլային քյաղաքյ ողջ քեոֆ ուրախութեն անիլ:

Թակավոր Հայդոյի խարսնսի թուդա̈րյուք կտեսնա:

Յոթ օրից սորա խարսնիս կբա̈շլային, յոթ օր, յոթ գիշեր խարսնիս կանին, Սուսամբա̈ր կպսակին վեր Հայդոյին:

Սորա դնու կնիկն էլ Հայդոն կպսակի վեր ուր նաֆար Ռսեփին:

Ինոնքյ խասան ուրենց մուրադին, տյուք էլ խասնեքյ ծեր մուրադին: